

ՍԵՂՄԱԳՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ատենախոսությունը պետք է ունենա համառոտ շարադրանք՝ սեղմագիր: Սեղմագիրը պետք է ունենա սահմանված ձևերի կազմ և 2-րդ էջ /<<Գիտական ատիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի աշխատանքի կանոնակարգ>> հավելվածներ 7 և 8/: Սեղմագրում՝ այսինքն աշխատանքի համառոտ բնութագրում, պետք է հիմնավորվի՝ ատենախոսության թեմայի արդիականությունը, նրա նպատակն ու խնդիրները, արդյունքների նորությունը, կիրառական նշանակությունը: Ապա պետք է ներկայացվի ատենախոսության գլուխների խիստ համառոտ բովանդակությունը, ատենախոսության հիմնական դրույթները, անհրաժեշտության դեպքում՝ փորձարկման մասին տեղեկություններով, եզրակացություն և ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքների ցանկ /անվանումները՝ բնօրինակի լեզվով, նշելով՝ հեղինակի (ների) ազգանունը և անվան առաջին տառը, հրատարակության տվյալները և էջերը/:

Սեղմագրի վերջում տրվում են ռուսերեն և անգլերեն ամփոփագրեր՝ յուրաքանչյուր լեզվով երկու էջ /հայերեն և անգլերեն, եթե սեղմագիրը ռուսերեն է, հայերեն և ռուսերեն, եթե սեղմագիրն այլ լեզվով է/:

Սեղմագիրը տպագրվում է համակարգչով՝ 9 տառաչափով, A5 /148x210 մմ/ չափի սպիտակ թղթի վրա, թեկնածուական ատենախոսության սեղմագիրը առնվազն 1 տպագրական մամուլ /մինչև 22 էջ/, դոկտորականինը՝ առնվազն 2 տպագրական մամուլ /մինչև 38 էջ/ ծավալով:

Սեղմագրում բանաձևերը, աղյուսակները, նկարները, գծապատկերները ձևավորվում են այնպես, ինչպես ատենախոսության մեջ:

Սեղմագրի բնօրինակի վրա ստորագրում են՝ մասնագիտական խորհրդի գիտքարտուղարը /2-րդ էջում/ և հայցորդը /վերջին էջում/:

ՍԵՂՄԱԳՐԻ ԿԱԶՄԸ*

Հիմնարկի անվանումը, որտեղ գործում է
ատենախոսությունը պաշտպանության ընդունած
մասնագիտական խորհուրդը

Ազգանուն, անուն, հայրանուն
Ատենախոսության անվանումը

_____ մասնագիտությամբ
_____ գիտությունների
դոկտորի (թեկնածուի) գիտական աստիճանի
հայցման ատենախոսության սեղմագիր

քաղաք-տարեթիվ

* Եթե սեղմագիրը օտար լեզվով է, ապա տրվում է նաև կազմի հայերեն տարբերակը:

ՍԵՂՄԱԳՐԻ 2-ՐԴ ԷԶԸ*

Ատենախոսության թեման հաստատվել է _____
հիմնարկի անվանումը

Գիտական ղեկավար (խորհրդատու) _____
գիտական աստիճանը, ազգանուն, անուն, հայրանուն

Պաշտոնական ընդդիմախոսներ _____
գիտական աստիճանը, ազգանուն, անուն, հայրանուն

Առաջատար կազմակերպություն _____
անվանումը

Պաշտպանությունը կայանալու է _____
ամսաթիվ, ժամ

_____ *հիմնարկի անվանումը (հասցեն)*
_____ մասնագիտական խորհրդում
խորհրդի անվանումը և համարը

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ _____
գրադարանում

Սեղմագիրն առաքված է _____
ամսաթիվ

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար _____
(ստորագրություն) (Անուն, ազգանուն)

* Եթե սեղմագիրը օտար լեզվով է, ապա տրվում է նաև հայերեն տարբերակը: